Ծուշանիկ Կուրղինյան

Նամակ Մարգո և Ալիս Ասլանյաններին

6 նոյեմբերի, 1925 թ.

Խարկով

Մարգո և Ալիս ջան .

Լինում է, չի լինում մի փոքրիկ ծիտիկ է լինում: Այդ ծիտիկն ապրում է մի հին ու ծերացած ծառի վրա, իր փոքրիկ բնի մեջ:

Մի առավոտ աչքը բաց է անում ծիտիկը և սաստիկ զարմանում՝ արևը փայլում է երկնքում, աղբյուրը քչքչում է, ծաղիկները բացվել զարդարվել են, իսկ թռչունները երգում են ուրախ, ծի՛վ, ծի՛վ, ծի՛վ . . .

Լա՛վ, լա՛վ, ասում է փոքրիկ ծիտիկը, դե՛հ, շատ մի զարմացեք, սպասեցեք բունս հավաքեմ, փետուրներս սարքեմ, կտուցս մաքրեմ թռչեմ, թռչեմ մի սիրուն ծառի ճյուղին և ես էլ երգեմ, իմ ձայնն էլ հասնի արևին, աղբյուրին . . .

Ու փոքրիկ ծիտիկը տեղավորվում է մի կանաչ ծառի ճյուղի, հպարտ նայում է դես ու դեն, վեր ու վար և սկսում է՝ ծի՛վ-ծի՛վ ծի՛վ-ծի՛վ, հե՛յ-հե՛յ . . .

Մի պառավ թռչուն բարկանում է հանկարծ,— Ձայնդ կտրիր, անպիտան, հեյ հեյն ի՞նչ է, արի մեզ մոտ, մեզ նման երգիր, որ մարդիկ լսեն ու հավանեն . . .

— Հե՛յ-հե՛յ,— նորից երգում է ծիտիկը:

Մի սոխակ ասում է այն պառավ թռչունին .

— Թո՛ղ, մի՛ խանգարիր, թող երգե հե՛յ-հե՛յ:

Մի նախանձոտ, նիհար թռչուն գնում է չար կատվին կանչելու, որ գա ծիտիկին ուտի:

— Իմ ի՞նչ գործն է մինչև անտառ գնալը . քո էլ ի՞նչ գործն է ծիտիկի հե՛յ-հե՛յ կանչելը,— թաթով խփում է թռչունի գլխին և ուտում կշտանում է . . .

Փոքրիկ ծիտիկը մեծանում, բուն է շինում, փոքրիկ ձվեր ածում և սիրուն ու փափլիկ ձագուկներ հանում . . .

Նստում են ձագուկները իրենց ծառի վրա ու երգում . . . Մի օր հանկարծ իջնում է երկնքից մի չարսիրտ ուրուր ու տանում ուտում է մեծ ձագուկին:

Ծիտիկը լաց է լինում գիշեր ցերեկ, լաց են լինում ձագուկներն ու մեծանում . . .

Մի օր ծիտիկը նստած ծաղիկների մոտ մտածում է և հանկարծ վար է ընկնում ու ոտքը սաստիկ ցավում է:

Էլ չի երգում ծիտիկը: Պառկած իր բնի մեջ նայում է անտառին . ծառերը խշխշում են, թռչունները երգում, պտուղները կարմրում: Գալիս են չարսիրտ թռչունները, նայում են հիվանդ ծիտիկին ու հարցնում . — Ինչո՞ւ պառկել ես, վեր կաց աշխատիր:

— Հա՛ . . . ոտքդ ցավո՞ւմ է, հա՞ . . .

— Միայն մի՞ ոտքդ է ցավում . . .

— Բեր թևերդ կտրենք, ոտքդ կլվանա . բեր սիրտդ հանենք՝ դնենք ոտքիդ տակ, որ գետնին հասնի, ման գաս . . .

Ծիտիկը մնաս բարով է ասում անտառին, արևին, աղբյուրներին ու թռչում, գնում է տաք երկիր . . .

Այդ երկրում ոչ ոք չի խանգարի ծիտիկին «հե՛յ-հե՛յ» երգելուն:

Մի օր ծիտիկի ոտքը կլավանա և կթռչի, ման կգա, մի լավ ծառ կգտնի, նոր բուն կշինի ու երբ բունը վերջացնե՝ ձեզ կկանչի, որ տեսնեք իրան, ուրախանաք . . .

Մարգո և Ալիս ջան, Դյոմային էլ դուք պատմեցեք ծիտիկի մասին:

Ձեր տատիկ՝ Շ. Կուրղինյան